ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ 2022 Թ. ԱՄՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Ուկրաինական ճգնաժամը և նոր սառը պատերազմը Ռուսաստանի և հավաքական Արևմուտքի միջև նշանավորվում է նաև մերձավորարևելյան և հարավկովկասյան երկրների «բարեկամության» համար սուր պայքարով: Այստեղ կա երկու կարևոր հանգամանք: Այս տարածաշրջանի պետությունները չեն միացել ՌԴ դեմ պատժամիջոցներին և կարող են մեղմել պատժամիջոցների հետևանքները, շարունակելով տնտեսական հարաբերությունները ռուսական ընկերությունների հետ: Մյուս կողմից էլ Ադրբեջանը և արաբական երկրները նաև նավթի ու գազի խոշոր արտահանողներ են և կարող են փրկել Արևմուտքը ռուսական էներգակիրների մատակարարման դադարեցման աղետալի հետևանքներից: Տարածաշրջանը գերկարևոր է և՝ Ռուսաստանի, և՝ Արևմուտքի համար: Այս հանգամանքներով է պայմանավորված պայքարը տարածաշրջանի «բարեկամության» համար:

Հայաստանի մեդիա դաշտում, հետազոտական կենտրոններում և քաղաքագիտական քննարկումներում արդեն տևական ժամանակ ընթանում է ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ հարավկովկասյան տարածաշրջանի, մասնավորապես նաև Հայաստանի կարևորության մասին դիսկուրսը: Կա տեսակետ, որ ամերիկյան պետությունն այստեղ շահեր չունի: Կա և հակառակ տեսակետը: Իսկ իրականում ինչպիսին են քաղաքական զարգացումները, ինչ գործոններ են ազդում դրանց ընթացքի վրա:

Առաջին հերթին պետք է նկատի ունենալ, որ հետխորհրդային պետություններում շարունակվում է քաղաքական համակարգերի կերպափոխման գործընթացը: Այնտեղ տեղի ունեցող բարդ ներքին գործընթաց-

ները կապված են նաև արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերանայման հետ: Դա հիմնականում վերաբերում է ինչպես ընդհանուր առմամբ Այսրկովկասի տարածաշրջանին, այնպես էլ Հայաստանին: Այստեղի բոլոր երեք պետությունները՝ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը, հետաքրքրում են ԱՄՆ–ին, նախևառաջ մերձավորարևելյան խնդիների համատեքստում: Երեքն էլ Իրանի հարևաններն են, որոնց հետ Վաշինգտոնն ունի 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո սկսված չլուծված բարդ խնդիրներ: Տարածաշրջանը կարևոր է նաև էներգետիկ անվտանգության, ՆԱՏՕ-ի ընդլայնման, սիրիական ճգնաժամի, ռուսական ազդեցության տարածման կանխման և մի քանի այլ խնդիրների լուծման ուղղությամբ ամերիկյան ռազմավարության հաջողության առումով, որոնք մեծապես որոշում են ԱՄՆ առաջնահերթությունները տարածաշրջանի պետությունների նկատմամբ:

Հայաստանում տեղի ունեցած ներքին փոփոխությունները, որոնք հանգեցրին իշխանափոխության, արևմտյան կենտրոններում որակվեցին որպես ավելի կայուն ժողովրդավարության հաստատման գերազանց հեռանկար: Երկրի ներսում արմատական փոփոխությունների հետ կապված ծնվեց նաև նրա արտաքին քաղաքական ինքնադրսևորման փոփոխության հույսը: Ավելի կոնկրետ, հույս ծնվեց, որ Հայաստանը կպոկվի Կրեմլի ազդեցության գոտուց: Նկատվեց հայկական ուղղությամբ ամերիկյան քաղաքականության նորացում: Այս տարի սկսված և դեռ չավարտված պատերազմը Ուկրաինայում նպաստեց ԱՄՆ-ի քաղաքականության ակտիվացմանը տարածաշրջանում, և մասնավորապես Հայաստանում:

Կարդալով հայկական թավշյա հեղափոխության, 2018թ. դեկտեմբերյան, իսկ հետո նաև 2021 թ. արտահերթ ընտրությունների մասին վաշինգտոնյան արձագանքները, կարող ենք արձանագրել, որ օվկիանոսից այն կողմ ուշադիր հետևել և հավանաբար համապատասխան հետևություններ են արել: Ընդհանուր առմամբ Այսրկովկասում և Հայաստանում Վաշինգտոնի քաղաքականության ակտիվացման մասին, մասնավորապես, վկայում է նաեւ իշխանության բարձրագույն էշելոններից ԱՄՆ պաշտոնյաների այցելությունների թվի աճը: Հայաստան են այցելել ԱՄՆ Պետքարտուղարության պատասխանատու պաշտոնյա Ջորջ Քենթը և

Նյու Յորքի նախկին քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանին, ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնը, դեսպան Ռիչարդ Միլսը և այլն: Նախագահ Թրամփը շնորհավորական ուղերձ հղեց Հայաստանի վարչապետի պաշտոնում ընտրված Նիկոլ Փաշինյանին: Թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո՝ Հայաստան են այցելել ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով փոխտեղակալ Բրիջիթ Բրինքը: Սակայն առավել ուշագրավ իրադարձություն էր ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնի այցը, որը տեղի էր ունեցել 2018 թվականի հոկտեմբերի 25-ին՝ նրա կովկասյան շրջագայության շրջանակներում, որտեղ ներառված էին - Այսրկովկասի բոլոր երեք երկրները: Այցը կոչված էր գնահատելու նշանակալի դերը, որը Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը խաղում են Իրանի, Ռուսաստանի և Թուրքիայի հետ հարաբերություններում, ինչը կանխորոշում է այդ տարածաշրջանի նկատմամբ ամերիկյան վարչակազմի հետաքրքրությունը: 2019 թ. մարտի 11-15– ը Հայաստանում կայացած ՆԱՏՕ-ի շաբաթվա միջոցառումների շրջանակներում Երևան էր ժամանել ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը:

Սովորաբար հայ-ամերիկյան քաղաքական, դիվանագիտական շփումները անկախության հռչակումից ի վեր, տեղի էին ունենում այս կամ այն միջազգային համաժողովներում և հիմնականում ղարաբաղյան խնդրի շուրջ: 2022թ. մայիսի 2-ից 6-ը տեղի ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի այցը ԱՄՆ, որի նպատակը արտաքուստ Արցախի շուրջ հակամարտությունը չէր, այլ Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխոսությունը: Ըստ մամուլում և այլ հրապարակումներում առկա պաշտոնական և այլ աղբյուրների տեղեկատվության տեղի ունեցան բանակցություններ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի, ԱՄՆ ՄԶԳ կառավարիչ Սամանթա Փաուերի, ԱՄՆ Կոնգրեսի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ և ելույթ ամերիկյան հեղինակավոր «Atlantic Council» ուղեղային կենտրոնում: Միրզոյանի և Բլինքենի բանակցությունների ավարտին ստորագրված փաստաթուղթը Հայաստանի և ԱՄՆ-ի միջև «Քաղաքացիական միջուկային էներգիայի ոլորտում

համագործակցության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիր էր: Հավելենք նաև, որ վերջերս ՀՀ-ում ԱՄՆ դեսպանը ներկա էր հայկական ժողովրդավարությանը նվիրված համաժողովին, որտեղ ելույթ ունեցավ նաև վարչապետ Նիկոլ Փաշինյանը: ԱՄՆ-ում բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներ է ունեցել նաև Անվտանգության խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանը:

Արդարության դեմ չմեղանչելու համար պետք է խոստովանենք, որ ԱՄՆ միշտ էլ մարդասիրական մեծ օգնություն է ցույց տվել Հայաստանին, ինչպես այժմ այնպես էլ նախկինում: Հիշենք Խորհրդային Հայաստանի առաջին վարչապետ Ալ. Մյասնիկյանի շնորհակալական նամակը ԱՄՆ նախագահ Հարդինգին: Նախագահ Ջո Բայդենի կողմից հաստատված 2023 թ. բյուջեն նախատեսում է Հայաստանին 60 մլն., իսկ Արցախին 2 կլն. դոլարի օգնություն: Սակայն մեր նկատմամբ ուշադրության առկայությունը թելադրված է աշխարհաքաղաքական որոշակի հանգամանքներով և առաջին հերթին հետխորհրդային տարածությունում ՌԴ ազդեցության գոտիների կրճատման և չեզոքցման ուղղությամբ ամերիկյան շահերի սպասարկմամբ: Նախ Հայաստանը միակ երկիրն է Հարավային Կովկասում, որն ինչպես Եվրասիական տնտեսական միության, այնպես էլ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ է, նրա տարածքում տեղակայված է Գյումրիի ռուսական ռազմակայանը, որը մեծ նշանակություն ունի Մոսկվայի համար Կովկասում նրա ռազմավարական շահերի տեսանկյունից: Այս իրողությունը հակասում է ԱՄՆ-ի առավել գլոբալ քաղաքականությանը՝ աշխարհում թույլ չտալ ամերիկյան գերիշխանությանը այլընտրանք ռուսական ազդեցության վերականգնումը հետխորհրդային տարածաշրջանում, որը տարածվում է նաև Այսրկովկասի վրա :

Հաջորդ պատճառը մի քանի տարի առաջ Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին կոնվենցիայի ստորագրումն էր մերձկասպյան երկրների կողմից, որն ըստ էության նվազեցնում է ԱՄՆ-ի ազդեցությունը Կասպից ծովի շրջանում, խանգարում մերձկասպյան շրջանում նրա էներգետիկ-տրանսպորտային ծրագրերի իրագործմանը: Բացի այդ. հաշվի առնելով Վրաստանի արտաքին քաղաքական գերակայություններ-

ը, որոնք ուղղված են եվրատլանտյան կառույցների հետ ինտեգրմանը և Ադրբեջանի պրոթուրքական դիրքորոշումը, **ՌԴ-ից դեպի Արևմուտք Հայաստանի դրեյֆը կարող է լրջորեն փոխել տարածաշրջանում ուժերի դասավորվածությունը, ինչն անթույլատրելի է Մոսկվայի ռազմավարական շահերի տեսանկյունից:** Ուստի, ակնհայտ է, որ այսօրվա Վաշինգտոնի մոտեցումը Երևանի նկատմամբ կփոխվի կովկասյան տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության ընդհանուր թարմացման շրջանակներում, որովհետև ԱՄՆ-ն հիմնական շեշտը դնում է տնտեսության զարգացման և անվտանգության ամրապնդման վրա, ինչը կարող է յուրօրինակ նախերգանք դառնալ Վաշինգտոնի շահերի ոլորտում Հայաստանի հետագա ներգրավման ճանապարհին: Հաշվարկները կապված են նաև ԱՄՆ-ի ներդրումային առաջարկություններին Երևանի դրական արձագանքի հետ:

Հույս կա, որ ներդրումային ծավալների մեծացումը կկրճատի ռուսական ազդեցությունը Հայաստանում, որի մասին հաճախ կարելի է ընթերցել վերլուծական հետազոտական կենտրոնների հրապարակումներում: Արևմտյան քաղաքական և քաղաքագիտական կենտրոններից եկող ազդակները ցույց են տալիս, որ բացառված չեն նաև սահմանափակումներ և հնարավոր պատժամիջոցներ, եթե նկատվի ռուսական ռազմաարդյունաբերական ընկերությունների հետ վտանգավոր գործարքներ:

Ակնհայտ է, որ Թրամփի, ներկայումս նաև Բայդենի վարչակազմերը հատուկ ուշադրություն են դարձնում հայ-իրանական հարաբերությունների զարգացմանը: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ն ձգտում է նվազագույնի հասցնել Իրանի դերը ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև ընդհանրապես Կովկասում, այդ թվում Հայաստանում, հատկապես հաշվի առնելով երկու պետությունների ընդհանուր սահմանի գոյությունը: Ընդ որում Երևանում գիտակցում են Թեհրանի նկատմամբ Վաշինգտոնի մտադրությունների լրջությունը նրա «վնասակար» քաղաքական վարքը փոխելու համար, միաժամանակ հասկանում են, որ Իրանի դեմ ԱՄՆ-ի ձեռնարկած միջոցների անտեսումը կարող է Հայաստանի դեմ պատժամիջոցների հանգեցնել Վաշինգտոնի կողմից: Մյուս կողմից, ցամաքային շրջափակման պայմաններում, որտեղ ներկայումս գտնվում է Հայաստանը, Իրանը նրան ապահովում է ելք դեպի արտաքին աշխարհ, և երկու

երկրներն էլ ամուր առևտրատնտեսական հարաբերություններ ունեն: Ըստ երևույթին, այս պայմաններում շատ դժվար կլինի այդ ուղղությամբ շարունակել կոմպլեմենտար քաղաքականությունը, ապահովելով միաժամանակ և հայ-իրանական բնականոն հարաբերությունները, և բարեկամությունը ԱՄՆ-ի հետ:

Մեկ կարևոր իրողություն ևս: Վաշինգտոնն անշուշտ շահագրգռված է հետխորհրդային երկրների սուվերենության ամրապնդմամբ: Կա ձգտում, նրանց օժտել այնպիսի գործիքներով, որոնք թույլ կտան ինքնիշխան որոշումներ կայացնել և վստահ լինել, որ նա չենթարկվի ճնշման այլ երկրների կողմից, պարզ է որ նկատի ունեն Ռուսաստանին: Այս հանգամանքը վերաբերվում է նաև Հայաստանին: Այսպիսով, ակնհայտ է ԱՄՆ-ի ձգտումը գտնել այնպիսի լուծում, որի դեպքում Հայաստանը, Ադրբեջանն ու Թուրքիան պետք է ամենասերտ կերպով կապված լինեն Արևմուտքի հետ, որպեսզի Ռուսաստանն ավելի քիչ հնարավորություններ ունենա Այսրկովկասի երկրների վրա «ճնշում գործադրելու» համար :

Հատկանշական է, որ այս պայմաններում ուժերի հավասարակշռությունը պահպանելու Հայաստանի քաղաքական ղեկավարության ունակությունը, չնայած Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև առճակատմանը, աջակցություն է գտնում Արևմուտքի մոտ: Հավանաբար լավ գիտակցում են Մոսկվայի առանձնահատուկ դերը ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում: Բացի այդ, Հայաստանի արտաքին քաղաքական ուղեգիծը հիմնված կոմպլեմենտարիզմի կամ փոխլրացման սկզբունքների վրա առանձնակի քննադատության չի ենթարկվում ամերիկյան իշխանությունների կողմից: Հայաստանում բոլոր իշխանությունների օրոք էլ ձգտել են հավասարակշռել բոլոր արտաքին ուժերը՝ չհակադրելով դրանք միմյանց, որը ենթադրում է ազատ և անսահմանափակ մասնակցություն միջազգային և տարածաշրջանային կառույցներում: Սակայն այդ կուրսը ողջամիտ սահմաններ ունի և դա Հայաստանում դա շատ լավ են հասկանում: Հասկանում են նաև, որ թիվ մեկ խնդիրը հայկական պետության համար անվտանգությունն է, հանգամանք, որը դեռ տևական ժամանակ հնարավորություն չի տալու վարել բացառապես պրագմատիկ շահերի վրա հիմնված արտաքին քաղաքակնություն: